**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA**

«03» 03 2026թ.

№ ՊՆԱՄՆ/419

ԱՁ Կարեն Պողոսյանին /ՀՎՀՀ 57347822/
ՀՀ, ք. Գյումրի, Ղորղանյան 7 նրբ., տ 16
էլ. փոստի հասցե՝ laragharibyan9@gmail.com
Հեռ.՝ +374 98 82 86 76

ՀՀ պաշտպանության նախարարության և ԱՁ Կարեն Պողոսյանի միջև 02.09.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-7/15-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում ԱՁ Կարեն Պողոսյանը պետք է մատակարարեր 100 000 հատ /Թևքանշան և այլ պարագաներ/ Թևքանշան պաշտպանական գույնի կպչուն ժապավենով/ ապրանքատեսակից չմատակարարված 55 800 հատի մասով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել՝ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.03.2026թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ ԱՁ Կարեն Պողոսյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 30 000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 94 224 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 20.01.2026թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 948 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 793 476 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 948 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 793 476 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա ԱՁ Կարեն Պողոսյանը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ